



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**Ա.Ս. ՆԱՅԱՆՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



Ս. ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ 35ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

**ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ, ԴՊԻՐՆԵՐՈՒ  
ԶԵՆՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՒՐԱՐԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ**

Հոգեւոր մեծ ցնծութեան եւ ուրախութեան օր հանդիսացաւ Մայիս 9, 2010, Կիրակի օրը գաղութիս, Կլէնտէյլի Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ ծխական համայնքին, ինչպէս նաեւ Արեւմտեան մեր Թեմի համար յատկապէս:

35 տարիներու ժամանակահատուած մը, խտացուած իր պատմութեամբ եւ առաքելութեամբ, դարձաւ յիշատակութեան, մեծարանքի եւ տօնակատարութեան օր, որովհետեւ իր հիմնադրութեան օրերէն մինչեւ այսօր «Եկեղեցին հայկական» կամ «Central-ի Եկեղեցին», ինչպէս կ'անուանեն շատեր, իսկապէս հանդիսացաւ ամբողջ եւ միջնաբերդ հաւատքի, հաստատեց իր անունին (Central՝ կեդրոնական) Եկեղեցի ըլլալու որակումը:

Մայիս 9, 2010-ը, որ կը զուգահիւսէր Մայրերու Օրուան տօնին, առաւօտեան հանդիսաւոր Ս. Պատարագով, սկիզբ առաւ, Եկեղեցւոյս 35 ամեակի տօնակատարութեան ծրագիրը, որ կ'ընդգրկէր դպիրներու ձեռնադրութիւն, ուրարներու տուչութիւն, իսկ կէսօրէ ետք, տեղի ունեցաւ պաշտօնական տօնակատարութիւնը՝ ճաշկերոյթի ձեռնարկով:

**Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԶԵՆՆԱԴՐՈՒԹԻՒՆ**

Առաւօտեան ժամը 10:30-ին, Եկեղեցւոյս Դպրաց դասին առաջնորդութեամբ եւ «Հրաշափառ» երգի կատարողութեամբ, պատարագիչ սրբազան հայրը՝ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան, մուտք գործեց Եկեղեցի փառաշուք թափօրով, հաւատացեալներու հոծ բազմութեան ներկայութեան: Ս. Պատարագի ընթացքին, երեք դպիրներ՝ Սասուն Եղոյեան, Սամսոն Իլէասեան, Յովհաննէս Դանիէլեան, եւ չորս նուիրեալներ՝ Արթուր Սաճարեան, Գօգօ Գազանճեան, Դաւիթ Վարդանեան եւ Արիկ Մեսրոպեան, Սաղմոսագիրքը իրենց ձեռքերուն, դասին մէջ, Ս. Խորանին առջեւ կանգնած, կ'ընթերցէին թիւ 121 սաղմոսը.- «Որքան ուրախացայ, երբ ինձի ըսին Տիրոջ տունը պիտի երթանք, ահա արդէն գաւիթներուն մէջ

կանգնած եք, Երուսաղեմ...», ապա, «Այսօր ուրախացեալ» շարականի երգեցողութեամբ խորան բարձրացան Արթուր Մաճառեան, Գօգօ Գազանճեան, Դաւիթ Վարդանեան եւ Արիւն Մեսրոպեան ու ծնրադրեցին Առաջնորդ Սրբազան Զօր առջեւ, որպէսզի ձեռնադրութեամբ ստանան դպրութեան չորս աստիճանները՝ դռնապանութիւն, ջահընկալութիւն, ընթերցողութիւն, երդմնեցչութիւն: Դպիրներուն ձեռնադրութիւնը կատարելով, Առաջնորդ Սրբազանը եկեղեցական առաջին փոքր չորս աստիճանները շնորհեց նուիրեալներուն հետեւեալ կարգով.- առաջին հերթին խաչածեւ կտրեց նուիրեալներու գլխու մագերը, աղօթելով որ այս արարողութեամբ, երկրաւոր ցանկութիւնները հեռանան իրենցմէ. ապա յանձնեց Սաղմոսագիրքը, պատուիրելով որ այսուհետեւ գիտակցօրէն հաւատան իրենց երգածներուն, գործով ցոյց տան՝ գործնականացնեն իրենց սորվածները: Ապա Առաջնորդ Սրբազան Զայրը բանալի յանձնեց ձեռնադրեալներուն՝ թելադրելով որ նուիրեալները միշտ ջանան մտաբերել թէ իրենց գործին համար հաշիւ պիտի տան Աստուծոյ, ու պահանջեց, որ եկեղեցի եկողներուն առջեւ դուռը միշտ աղօթքով պէտք է բանան ու աղօթքով ալ պէտք է փակեն: Ապա յանձնեց առաքելական գիրքը, յանձնարարելով լաւատեղեակ ըլլալ Աստուծոյ խօսքին ու պատմեն զայն ուղղամտութեամբ եւ հաւատքով: Սրբազան Զայրը երդմնեցչութեան աստիճանը շնորհելով՝ Մաշտոցը յանձնեց նուիրեալներուն եւ հրահանգեց որ գոց սորվին «հրաժարիմք»ը, որպէսզի հիւանդերու համար աղօթելու եւ մկրտութեան եկողներու հրաժարեցնելու իրաւունք ստանան: Եւ վերջապէս յաջորդաբար վառած աշտանակը եւ գինիի դատարկ բաժակամանը յանձնելով, իշխանութիւն տուաւ ձեռնադրեալներուն եկեղեցւոյ ջահերն ու կանթեղները վառելու, ինչպէս նաեւ պատարագի գինին սրուակին մէջ լեցնելու:

Յոգեպարար այս արարողութեան աւարտին, ձեռնադրեալ չորս նոր դպիրներուն միացան միւս երեք դպիրները, ու Առաջնորդ Սրբազան Զայրը յատուկ աղօթքով իւրաքանչիւր դպիրի ձախ ուսին զետեղեց Զրիստոսի քաղցր լուծը խորհրդանշող ուրարը ու «պահպանիչ»ի աղօթքով ամբողջացաւ ձեռնադրութեան արարողութիւնը: Այնուհետեւ, եօթը ուրարակիրները մնացին Ս. Խորանին վրայ. Սրբազան Զայրը փոխանցեց իր հոգեւոր պատգամը, յիշելով եկեղեցւոյ 35 տարիներու բերած բեղուն ծառայութիւնը գաղութիս եւ ուղղելով խօսքը նորոգ ձեռնադրեալ դպիր-ուրարակիրներուն, իր հայրական թելադրանքները կատարեց ըսելով, որ Զրիստոսի սիրով լի՝ յանձնառու պէտք է ըլլան իրենց ծառայութեան, ամբողջական նուիրումով եւ առաքիւնութեամբ կատարեն Աստուծոյ եկեղեցւոյ եւ հաւատացեալներուն հանդէպ իրենց պարտականութիւնը:

Առաջնորդ Սրբազանը, անդրադառնալով մայրերու տօնին, շնորհաւորեց մայրերը եւ յատկապէս հայ մայրերը, գնահատելով մօր դերը եւ նուիրումը ընտանեկան եւ հաւաքական մեր կեանքի ընթացքին:

Ս. Պատարագի աւարտին, դպրաց դասու թափօրի առաջնորդութեամբ, Առաջնորդ Սրբազան Զայրը դուրս եկաւ եկեղեցիէն դէպի գաւիթ, ուր «Կիլիկիա» երգով, ամբողջացաւ եկեղեցւոյ արարողակարգը:

## ՃԱՇԿԵՐՈՅԹ

Եկեղեցւոյս 35 ամեակի տօնակատարութեան երկրորդ հանգրուանը ճաշկերոյթի բաժինն էր, որ կազմակերպուած էր Ս. Աստուածածին եկեղեցւոյ Յոգեւոր Յովիներուն եւ հոգաբարձութեան կողմէ ու կը վայելէր հովանաւորութիւնն ու ներկայութիւնը Առաջնորդ Սրբազանին:

Ձեռնարկը տեղի ունեցաւ Palladio ճաշարահին մէջ, երեկոյեան ժամը 6:00-ին, հիւրընկալութեամբ ճաշարահի սեփականատիրոջ՝ Տէր եւ Տիկ. Աւետիս եւ Յասմիկ Զէշիշեաններու: Սեղանի օրհնութիւնը կատարուեցաւ միասնաբար եկեղեցւոյ երեք հովիներուն՝ Արժ. Տ. Վազգէն Զինյ. Աթմաճեանի, Արժ. Տ. Արտակին Զինյ. ՏԵՄԻՐՃԵԱՆԻ եւ Արժ. Տ. Կոմիտաս ԸՅԼյ. Թորոսեանի կողմէ. ապա գործադրուեցաւ յաւուր պատշաճի յայտագիր մը: Հանդիսավարը՝ Պրն. Լէրի Չարեան, բացման խօսքը արտասանելէ եւ ներկաներուն բարի գալուստ մաղթելէ ետք, հրաւիրեց Տիկ. Ռիմա Պօղոսեանը, որ հակիրճ կերպով անդրադարձաւ եկեղեցւոյ հիմնադրման պայմաններուն եւ կատարած աստուածահաճոյ ու ազգօգուտ գործունէութեան:

Գեղարուեստական յայտագրին մասնակցութիւն բերին Գագիկ Պատալեանը եւ իր նուագախումբը, ներկաներուն հրամցնելով հայկական ժողովրդական եւ աշուղական երգերու փունջ մը: Ապա խօսք առաւ 35-ամեակի Յանձնախումբի ատենապետ՝ Պրն. Կարօ Էշկիեան, որ յատուկ շնորհակալական խօսք ուղղեց ներկաներուն եւ յատկապէս եկեղեցւոյ բարերարներուն, կնքահայրերուն եւ բոլոր մասնակից անդամներուն, որոնց նուիրատուութեանց եւ նուիրումին արգասիքը կը հանդիսանայ Ս. Աստուածածին եկեղեցին: Այս առթիւ ցուցադրուեցաւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ 35-ամեայ կեանքին նուիրուած պատմական տեսաերիզ մը, որ կ'ընդգրկէր եկեղեցւոյս պատմութիւնը եւ գործունէութիւնը համառօտ կերպով, հիմնադրութենէն մինչեւ օրս: Ապա բեմ հրաւիրուեցաւ եկեղեցւոյ հոգաբարձութեան ատենապետ Պրն. Չարեհ Մարգարեան, որ իր խօսքին մէջ անդրադարձաւ բոլոր անոնց, որոնք գիտակցելով եկեղեցական եւ ազգային կեանքի ծառայութեան կարեւորութեան, իրենց թանկագին ժամերը կը տրամադրեն ազգին եւ եկեղեցւոյ:

Ապա, յանուն հոգաբարձութեան, եւ գնահատելով եկեղեցւոյ գրասենեակի հաւատարիմ ու երկար տարիներու նուիրեալ՝ Տիկ. Անուշ Կարապետեանի ու քարտուղարուհի՝ Տիկ. Յուրի Պապահէքեանին ծառայութիւնը, հոգաբարձութեան ատենապետը զանոնք պատուեց յատուկ գնահատագրով: Պրն. ատենապետը նոյնպէս, յատուկ գնահատանքի խօսք ուղղեց եկեղեցւոյ երեք քահանայ հայրերուն, անոնց նուիրելով մէկական նորատիպ «Մաշտոց», պատասխանատուութեան բարձր գիտակցութեան համար, նշելով, որ հոգեւոր պարտականութիւններու կողքին, հոգեւոր հայրերը կը ստանձնեն նաեւ վարչական եւ այլ աշխատանքներ, որպէսզի Ս. Աստուածածին եկեղեցին մնայ միշտ պայծառ եւ կանգուն:

Խօսք առաւ նաեւ Կլենտէյլի քաղաքապետ Տիար Արա Նաճարեան, որ հպարտութեամբ անդրադարձաւ եկեղեցւոյ կարեւոր եւ մեծ դերին, ի նպաստ գաղութիս համայն հայութեան, շնորհաւորեց եկեղեցւոյ 35-ամեակը եւ մաղթեց առաւել ուժ, կորով եւ յառաջդիմութիւն:

Մոմավառութեան հանդիսութենէն առաջ, Արժ. Տ. Վազգէն քնյ. Աթմաճեան, Սայրերու Տօնին առիթով, նախ շնորհաւորեց բոլոր հայ մայրերը, որոնք ոչ մէկ ջանք կը խնայեն իրենց գաւակներու բարոյական եւ հայեցի դաստիարակութեան համար: Ապա տեղի ունեցաւ երեք ծաղկեփունջերու նուիրում, առաջինը՝ եկեղեցւոյս գլխաւոր բարերարուհի Տիկ. Զիլտա Տէր Միւսատեանի, երկրորդը՝ Թիւֆէնքեան Մանկամտուրի բարերարուհի Տիկ. Սաւի Թիւֆէնքեանի, եւ երրորդը՝ Palladio ճաշարահի սեփականատիրոջ տիկինին՝ Տիկ. Յասմիկ Զէշիշեանի, հայ եկեղեցւոյ հանդէպ իրենց տածած սիրոյն եւ նուիրումին համար:

Մոմավառութեան հանդիսութեան պահը հասած էր. Արժ. Տ. Վազգէն քնյ. մոմավառներու անունները կարդալով, հրաւիրեց 35-ամեակի համար պատրաստուած յատուկ սեղանին շուրջ, վառելու համար մոմերը: Ապա, եկեղեցւոյ հոգեւոր հովիւներուն եւ հոգաբարձութեան խնդրանքով, խորհրդանշական 36-րդ մոմը վառեց եկեղեցւոյս գլխաւոր բարերարուհի՝ Տիկ. Զիլտա Տէր Միւսատեանը:

Յայտագրի աւարտին, օրհնութեան ու գնահատանքի խօսք ուղղեց Առաջնորդ Սրբազանը: Ան վեր առաւ եկեղեցւոյ հիմնադիր սերունդին վաստակն ու երախտիքը, գնահատեց Ս. Աստուածածին եկեղեցւոյ ծառայողները եւ մաղթեց, որ անոնց եկեղեցաշէն ու ժողովրդանուէր գործունեութիւնը շարունակուի վերանորոգ թափով: Ան շնորհաւորեց Ս. Աստուածածին եկեղեցւոյ բարերարները, կնքահայրերը, նուիրատուները, ազգ. երեսփոխանները, հոգաբարձութիւնը, 35-ամեակի յանձնախումբը եւ բոլոր անոնք, որոնք սատար կը հանդիսանան եկեղեցւոյ պայծառացման աշխատանքներուն: Առաջնորդ Սրբազանը Օրհնութեան Գիրեր շնորհեց եկեղեցւոյս նուիրեալ ծառայող, ազնուասիրտ եւ անձնուրաց սպասաւորներէն՝ Տիարք Զարեհ Մարգարեանի, Իսահակ Գազանճեանի, Զրայր Պալեանի, Տոքթ. Խաչիկ Ռշտունիի, Վաղինակ Պապայեանի, Ռուբէն Գիւրջեանի եւ Տոքթ. Յակոբ Տէր Մկրտիչեանի, որոնք իրենց անսակարկ նուիրումով եւ միշտ հաւատարիմ մնալով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Արեւմտեան Թեմիս Ազգային Առաջնորդարանին եւ յատկապէս Ս. Աստուածածին եկեղեցւոյ, իրենց ծառայական կեանքով կ'օժանդակեն եկեղեցւոյս պայծառացման: Առաջնորդ Սրբազանին յաջողութեան բարեմաղթութիւններով, շնորհաւորանքներով եւ կարկանդակի հատումով ձեռնարկը հասաւ իր աւարտին:

**ԱՐՏԱԿ ԲՅՆՅ. ՏԵՄԻՐՃԵԱՆ**

## **ST. MARY'S CHURCH CELEBRATES ITS 35<sup>TH</sup> ANNIVERSARY**

On Sunday, May 9<sup>th</sup>, 2010, St. Mary's Church in Glendale ceremoniously celebrated its 35<sup>th</sup> anniversary with Episcopal Divine Liturgy, ordination of acolytes and stole bearers, and a gala banquet in the evening.

The day began with Divine Liturgy celebrated by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate. During the service, the Prelate ordained acolytes stole bearers, and advised them of the responsibilities and obligations

they now bear as acolytes. After placing a stole on their left shoulders, the Prelate blessed them, thus ending the ordination ceremony.

His Eminence then delivered the sermon, in which he referenced the invaluable service the church has been providing to the community over the past 35 years, and turning to the newly ordained acolytes, urged them to carry out their new responsibilities and obligations faithfully and serve their fellow man with love and devotion. In honor of Mother's Day, the Prelate congratulated all the mothers in attendance, commending them for their role and contribution in our individual and collective lives.

In the evening the Prelate attended the 35<sup>th</sup> anniversary banquet which was organized by the Pastors and Board of Trustees. The banquet, which was held at Palladio banquet hall, was hosted by the hall's owner Mr. and Mrs. Avedis and Hasmig Keshishian.

Pastors Reverend Fathers Vazken Atmajian, Ardak Demirjian, and Gomidas Torossian collectively delivered the invocation and blessed the tables, after which Master of Ceremonies Mr. Larry Zarian welcomed the guests and invited Mrs. Rima Boghossian to give a brief background on the history of the church.

Singer Gagik Badalyan then entertained the guests with a set of traditional and popular songs.

Following the cultural program, Chairman of the 35<sup>th</sup> anniversary committee Mr. Garo Eshgian delivered remarks on behalf of the committee, thanking sponsors and guests for their encouragement, participation, and contributions to the realization of the church's mission. A video of the history of the church and its achievements in the past 35 years followed. On behalf of the Board of Trustees, Chairman Mr. Zareh Markarian also addressed the guests, thanking all those who volunteer their time and resources for the advancement of the church.

On behalf of the Board of Trustees, Mr. Zareh Markarian then presented church secretaries Mrs. Anoush Garabedian and Mrs. Hourri Babahekian with plaques for their years-long service, and the pastors with mementos in appreciation of their leadership and service to their flock.

In his remarks, Glendale Mayor Ara Najarian highlighted the church's role in the community and congratulate them on their 35<sup>th</sup> anniversary.

Prior to the lighting of the candles ceremony, Rev. Fr. Vazken Atmajian conveyed his well wishes to all the mothers in honor of Mother's Day, after which bouquets of flowers were presented to the grand benefactor of the church Mrs. Hilda Der Minassian, Tufenkian School benefactor Mrs. Savey Tufenkian, and Palladio banquet hall owner Mrs. Hasmig Keshishian.

Fr. Vazken then called the banquet sponsors to gather for the candle lighting ceremony. The symbolic 36<sup>th</sup> candle was lit by Mrs. Hilda Der Minassian.

To conclude the program, the MC invited the Prelate to convey his blessings and remarks on this joyous occasion. His Eminence first and foremost congratulated the St. Mary's Church family on this joyous occasion. He exalted the vision and dedication of the founding members, commending all

the volunteers of the church who have followed in the footsteps and example of the founders, and wishing them new successes as they labor for the splendor of the church. The Prelate then awarded letters of commendation to Mr. Zareh Markarian, Mr. Sahak Kazangian, Mr. Hrair Balian, Dr. Khatchig Rechdouni, Mr. Vaghinag Babaian, Mr. Ruben Gourjian, and Dr. Hagop Der Megerdichian for their years-long service and commitment to the progress of the church.

The celebration came to a close with the cutting of the 35<sup>th</sup> anniversary cake.